Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
հունիսի 1-ի N 871 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԱՇՏՈՆԱԹՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից պաշտոնաթող Հայաստանի Հանրապետության վարչապետի (այսուհետ՝ պաշտոնաթող վարչապետ) գրասենյակի (այսուհետ՝ գրասենյակ) գործունեության ֆինանսավորման իրականացման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից պաշտոնաթող վարչապետի գրասենյակի գործունեության իրականացման համար ֆինանսական միջոցներ տրամադրվում են հետևյալ ուղղություններով՝

1) գրասենյակի աշխատողների աշխատանքի վարձատրություն.

2) գրասենյակի ընթացիկ գործունեության հետ կապված ծառայությունների և ապրանքների ձեռքբերում:

3. Տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից պաշտոնաթող վարչապետի գրասենյակի գործունեության ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ֆինանսավորման ծախսային ծրագրով նախատեսված միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հաստատված նախահաշվի հիման վրա:

4. Սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված գրասենյակի աշխատողների հիմնական աշխատավարձի չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 737-Ն որոշման N 5.1 հավելվածով:

5. Պաշտոնաթող վարչապետի գրասենյակի կողմից վարձակալվող տարածքի տարեկան վարձավճարի փոխհատուցման չափը չի կարող գերազանցել 2 մլն դրամը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

01.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ